



«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, ապրիլի 18-ին, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված՝ անցկացվեց «Գյուղատնտեսական ժառանգություն» խորագրով միջոցառումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն, ԻԿՕՄՍՍ/Հայաստանի նախագահ Գագիկ Գյուրջյանը:



«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, ապրիլի 18-ին, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված՝ անցկացվեց «Գյուղատնտեսական ժառանգություն» խորագրով միջոցառումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն, ԻԿՕՄՍՍ/Հայաստանի նախագահ Գագիկ Գյուրջյանը:

Ողջույնի խոսքեր ասացին ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արև Սամուելյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արման Կիրակոսյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Ավետիսյանը, Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի մշտական համակարգող Դաֆինա Գերչևան, Հայաստանի Ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը և այլք:

Միջոցառման շրջանակում բացվեց «Ուրարտուից՝ Երևանի գարեջուր» ցուցահանդեսը և «Հուշարձանների լուսանկարման միջազգային փորձ-2009» լուսանկարչական մրցույթի դափնեկիրներին «Զվարթնոցի տաճար», «Օշականի եկեղեցին», «Բյուրականի աստղադիտարան», «Կարմրավոր եկեղեցին» լուսանկարների հեղինակներին հանձնվեցին միջազգային դիպլոմները: Միջոցառումը կատարումներով ողջունեցին «Բերդ» պարային հանույթի երիտասարդ պարողները: